

## ԿԱ՞ ԱՐԴՅՈՔ ՄԱՐԳԱՐԵ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Մ.թ.ա. 45 թ.-ին Ցիցերոնը գրել է. «Ընդհանուր առմամբ, չկա մի ժողովուրդ՝ կատարյալ ու կիրթ կամ բարբարոս ու անքաղաքակիրթ, որ հնարավոր չհամարի, թե ապագա իրադարձությունները կարող են ճանաչելի, հասկանալի և կանխատեսելի լինել որոշ մարդկանց կողմից»:

Իհարկե, հռոմեացի մեծ հռետորը գիտեր, որ ցանկացած հասարակության մեջ կգտնվեն անհատներ, որոնք իրենց հոգեբանական, ֆիզիոլոգիական, հոգևոր, կրոնական տարբերությունների շնորհիվ և հանգամանքների բերումով իրենց կդասեն մարգարեների «արտոնյալ դասին»:

Մեր օրերում այս տեսակետը նույնքան ճշմարիտ է, որքան անցյալում: Սակայն, Ցիցերոնը չէր կարող երևակայել, որ XXI դարում գուշակների (մարգարեների) թիվը համաչափ կլիներ երկրի բնակչության թվին, ինչպես Հայաստանում է:

Մեր հասարակության մեջ, գործազրկության կամ ընդհանուր կիսագրագիտության պատճառով, այնքան են բազմացել իրենց կանխագուշակ-կանխատեսողների շարքին դասող հմուտ «քաղաքական գործիչները», «հասարակագետները», «փորձագետները» - տնտեսագետները, քաղտեխնոլոգները և ռազմական փորձագետները, որ նրանց «արդիական» և «գիտականորեն ապացուցված» տեղեկատվությունից օգտվող սովորական մահկանուցուին այլ բան չի մնում անելու, քան... «խելագարվել»:

Լրատվամիջոցների զարգացմանը և «խոսքի համընդհանուր ազատության» իրավունքի հռչակմանը զուգահեռ և մարդու անձնական կյանքի հանդեպ ոտնձգության համար պատասխանատվության իսպառ բացակայության պայմաններում, «բախտագուշակ-մասնագետները» և «բազմապրոֆիլ փորձագետները» հասարակության մեջ դարձել են զանգվածային պսիխոզ հիվանդության աղբյուր:

Անկախ նրանից, թե ինչպես է գնահատվել ներկան կամ կանխատեսվել ապագան, նշված «մասնագետների» և «փորձագետների» նպատակն է՝ բնեռել և գրավել մարդկանց ուշադրությունը:

Հանրային կարծիքի մանիպուլյացիայի հարցերում անփորձ բնակչության ճնշող մեծամասնությանը հիմարացնելու այս գործընթացը հատկապես համոզիչ է երևում, երբ այն ներկայացվում է՝ ժողովրդավարության, անձի ազատության, երջանկության և արդարության, առաջընթացի և տեխնոլոգիայի ու բանականության հաղթանակի եզրույթներով փաթեթավորված:

Հասարակությունը, այս հիստերիկ, կեղծ գիտական և կեղծ գրթասիրտ պրոպագանդայի ճնշման տակ, մտնում է իռացիոնալ աղանդների, կեղծ մարգարեների, հեղափոխական

բարեփոխիչների, վեհության մոլուցքով տառապող անարխիստական «ազատ անհատների» աշխարհ:

Փաստերի խնդիրը «զանգվածային փսիխոզի» ժամանակ պարզապես վերանում է, և անհատի տրամաբանական հիմնավորման վակուումը լցվում է «գուշակականիատեսողի» կամ «բազմապրոֆիլ փորձագետի» սեփական շահերի ու կարիքների համաձայն և նպաստում նրանց շահադիտական հավակնությունների աճին:

Որպես կանոն, ինչքան մարգարեությունը կամ փորձագիտական գնահատականը անորոշ ու մշուշոտ են ժամանակի և տարածության մեջ, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ նրանց ավելի լուրջ կվերաբերվեն, և այնքան ավելի ցածր է պատասխանատվությունը՝ բարոյական առումով հասարակությանը պատճառած վնասի համար:

Սակայն, պետք է նշել, որ միշտ կգտնվեն հանդուրժողականության բազմաթիվ ընդդիմադիր-աջակիցներ, որոնք «աճպարարություն անելով» ժողովրդավարության հիմնարար սկզբունքներով (հանդուրժողականություն, խոսքի ազատություն, սեփական կարծիքի իրավունքն այլն), կողջունեն սիրողական բախտագուշակների և փորձագետների զանգվածային հրապարակային հայտարարությունները: Մի բան է, երբ ոչ պրոֆեսիոնալն իր կարծիքն արտահայտում է բարեկամների, գործընկերների շրջապատում կամ հարցումների ժամանակ, և բոլորովին այլ, երբ նրանց ամբիոն է տրամադրվում՝ հաճախ լսարանի հետ հետադարձ կապի բացակայությամբ:

Լրատվամիջոցների «մոնիտորներից» հնչած խոսքի ճշմարտացիությանը և ուժին սրբորեն հավատացող բնակչության որոշակի խավին հիմարացնելու գործընթացին մասնակցում է «ծառայողների» մի ամբողջ բանակ, որը հաճախ կորպորատիվ շահադիտական օգուտների համար պատրաստ է ամբիոն տրամադրել ցանկացած «նորահայտ» կեղծ մարգարեի, միայն թե նա «քացի տա» մերձավորին:

Անհրաժեշտ է ողջունել քննադատությունը, քանզի այն չափազանց կարևոր և արդիական է մեր հասարակության համար, սակայն, միևնույն ժամանակ, քննադատությունը պետք է լինի կառուցողական, փաստագրական, բազմակողմանի հիմնավորված համապատասխան բացահայտումներով և եզրակացություններով:

Քննադատությունը՝ այսրոպեական հույզերի արգասիք չէ: Հրապարակային հայտարարության համար պետք է կրել գոնե բարոյական պատասխանատվություն: Անընդունելի է հանրային ելույթի ժամանակ քեզ ներկայացնել որպես «բարեպաշտ» մարդ, իսկ առօրյա կյանքում թույլ տալ նույն մեղքերը, որոնց համար փնտվում ես հակառակորդիդ:

Չզիտես ինչու այս «հիվանդությամբ» հիմնականում տառապում են ժողովրդի ընտրյալները, որոնք ներկայացնում են նույն ժողովրդի կամքը ընտրական կառույցների բոլոր մակարդակներում:

Բացի նորահայտ «կանխագուշակ-կանխատեսողներից» և «բազմապրոֆիլ փորձագետներից», որոնք գոր ու գիշեր մասնակցում են երկրի բնակչության հիմարացման գործընթացին, հայրենական պաշտոնյաների ճնշող մեծամասնությունը իր ծանրակշիռ ներդրումն ունի այս գործընթացում:

Անկախության տարիներին երկրում իրականացվել են տարաբնույթ ծրագրեր. կրթության, առողջապահության, գյուղատնտեսության բարձրացման, տնտեսության առողջացման, տեղական ինքնակառավարման մարմինների ամրապնդման, կենսաթոշակային համակարգի բարելավման, աղետի գոտու վերականգնման ուղղությամբ և այլն:

Իրականացված ծրագրերի արդյունավետության մասին դատելը թողնենք մեր ընթերցողներին, սակայն ծրագրերից մեկը տարեցտարի մնում է անփոփոխ. դա կոռուպցիայի դեմ պայքարի ծրագիրն է:

Հարգելի բարձրաստիճան պաշտոնյաներ, խնդրում եմ կանխատեսել, թե ըստ ձեր ենթադրությունների, երբ այդ ուղղությամբ դրական տեղաշարժեր կգրանցվեն մեր երկրում: Մի տեսակ անհարմար է՝ դուք պայքարում եք, իսկ օֆշորային գոտիներում աճում է հայ հաճախորդների թիվը:

Չէի ցանկանա նման տխուր նոտայով ավարտել հոդվածը, սակայն Աստված վկա, ինչքան շատ ես գրում, այնքան ավելի շատ ես ուզում բացասական օրինակներ օգտագործել, սակայն անսալով իմ ընկերների և բարեկամների խորհրդին՝ ես ձեռնպահ կմնամ...

Լևոն Ներսիսյան

Ա.Գ. Մախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի տնօրեն